

Արշարունուն, որ, ի գէպ ասել, խիստ արժանաւոր մի եկեղեցական է, և իրանց բուռն ցոյցերով կաթողիկոսական ամենաարժանաւոր թեկնածու հոչակած Դուրեան սրբազնին զլացան նոյն իսկ քաղաքավարութեան համար առաջարկել հրաժարական ներկայացնել ընտրական ժողովին, այլ որևէ ողորմելի «օ քուէով» սեացրին նորան Համազդային ժողովում, արժանի չհամարելով՝ նոյն իսկ պատրիարքութեան «տեղապահի» պաշտօնի համար:

Շատ տիրուր խոհեր է տրամադրում տաճակահայոց այս վարմունքը առհամարակ և այս հանգամանքը մի անգամ ևս ընդգծում է «հոսհոս» բառի նշանակութիւնը, որ այնպէս սազում է մեր տաճակահայ եղբայրներին:

### ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԶԱՐԱԲԱԽՏ ՃԵՄԱՐԱՆ

Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի պատմութիւնը հայկական կեանքի դժբաղտ իրականութեան ամենահարազատ պատկերն է ներկայացնում: Կարծէք Էջմիածնի մթնոլորտը ամեն տարի մի դժբաղտ պատահար է ստեղծում հայկական այդ հաստատութեան գլխին, որ երբեմն վերջանում է ուսանողների մի խմբի հեռացուելով, իսկ երբեմն և աւելի յաճախ՝ տեսուչների և միշտ աւելի սրտացաւ տեսուչների արձակուելով:

Դժուար է ցոյց տալ մի որոշ ժամանակաշրջան, երբ խաղաղ և կանոնաւոր կեանքը ճեմարանում չխանգարուէր մի որևէ դաշտութեամբ, նիւթուած այս կամ այն գործչի դէմ, որ անմըտութիւն էր ունեցել փոքր ինչ աւելի եռանդ ցոյց տալ իւր գործունէութեան մէջ և կամ կամակատար չինել վանքի մէջ ոյժ ներկայացնող անհատների քմահաճոյքին:

Այս երեսոյթը այնքան խիստ պարբերականութիւն է ստացել, որ զարմանալի կլինէր մեզ համար, եթէ ճեմարանի այժմեան կեանքը այլ պատկեր ներկայացնէր մեզ, քան ինչ որ սովոր ենք տեսնել:

Ուստի և մենք ամենսին չզարմացանք, երբ մեզ պատմեցին, որ ներկայումս զարմանալի հալածանք է սկսուել այժմեան տեսսուչ Մինաս թերերեանի դէմ մինչեւ այն աստիճան, որ անգամ դիտաւորութիւն կայ կառավարութեան միջոցով խուզարկել և գտնել այն անձին, որ «Հայորդի» ստորագրութեամբ մի բրոշիւրով հերքել է ճեմարանի մասին կատարած քննութեան հետևանքները և ո գիտէ գուցէ և երազել տպագրող տպարանին էլ դատի հնթարկել...

Ի՞նչքան վատ է, երբ մարդիկ կորցնում են իրանց խոհականութիւնը:

Մեզ ճաղորդում են, որ անցեալները վարդապեաներից մէկը արժայայտել է մի միտք, իբր թէ «Հայորդի» ստորագրութեամբ բրծիւրը գրողն ու հրատարակողը օր. Ն. Աղանեանն է, իսկ այժմ էջմիածնում միտք է յդացուել պաշտօնապէս պահանջել Աղանեան տպարանից մասնել բրօշիւրը գրողի անունը:

Աստուած սխալուած է եղել անշուշտ ինկվիզիցիան ստեղծելով իսպանիայում. նորա տեղը Հայաստանն էր, Արարատեան դաշտը...

Դառնալով ճեմարանին մենք այժմ տեսնում ենք նոյն դրութիւնը կրկնուած աւելի մեծ չափով և թափով ճեմարանի այժմ մեան տեսուչ Մ. Բերբերեանի շուրջը այն մարդկանց կողմից, որոնք չկարողացան տանել Բերբերեանի բռնած դրական դիրքը էջմիածնում, մոռանալով, որ Մայր Աթոռի Հոգեւոր ճեմարանի տէրն և տնօրէնը միմիայն ամենայն Հայոց կաթողիկոսն է և որ և է նոր փոփոխութիւն ճեմարանի կեանքում կարող է ներմուծուել ոչ այլազգ, քան եթէ ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռքով: Եւ այժմ, երբ մենք արդէն կաթողիկոս ունենք և սպասում ենք նորան շուտով տեսնել էջմիածնում, աւելի քան անպատեհ ոտընածութիւն է նորա իրաւունքները ոտնակոխ անել:

### «ՀԱՅԿԱԸՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

«Berliner Tageblatt»-ի մէջ մի ընդարձակ թղթակցութիւն է եղել տպուած «Հայաստանի մայրաքաղաքից»՝ Վանից ուղղուած «In der Hauptstadt Armeniens» վերնագրով: Յօդուածի հեղինակ եղուարդ Միգինդը

«Յիրաւի ջախջախիչ փաստեր» է բերում հայկական սեպարատիզմի մասին, ասում է «Գործի» Նիցցայի թղթակիցը, մի ահագին մեղադրական, նմանը չը տեսնուած... Դաշնակիստները—ասում է նա—առաջ պիտի խլեն թիւրքաց Հայաստանը, յետոյ ռուսական ու պարսկական Հայաստանները—և պիտի կազմեն բոլորից՝ անկախ հայկական հանրապետութիւն... Վանը կենդրոնն է սեպարատիստական պրօպագանդի և Վանի դաշնակցական խումբը թւում է պ. Միգինդին կարօնարիզմի մի սոսկալի աղանդ, թիւրքակերների ազգայնամոլ Քանատիկոսների մի հաւաքածու: Եւ նրա ամենազօր ազգեցութիւնը տարածում է ամբողջ ժողովրդի, ամբողջ երիտասարդութեան վրայ. Նրա առջև դողում են նոյն իսկ օտար միսիօնարութիւնները. Նրա հրահանգով հայ ա-